ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1953 Общественные науки

Վ. Ղալբանգյան

451 Թ. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հայտնի է, որ չորրորդ դարում Հայաստանին տիրելու համար Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև տեղի ունեցող բազմամյա պատերազմներն ավարտվեցին 387 թվականին՝ Նվարսակի դաշնադրությամբ, որով Հայաստանը բաժանվեց երկու մասի։ Արևելյան մասն անցավ Պարսկաստանի գերիշխանության տակ, իսկ արևմտյանը՝ Բյուզանդիայի։ Բաժանումից անմիջապես հետո Հայաստանի՝ Բյուզանդիայի տիրապետության տակ անցած մասում վերացվեց հայ թագավորական իշխանությունը՝ Արշակունիների դինաստիան։ Պարսկական տիրապետության տակ անցած մասում հայկական թագավորական իշխանությունն իր կիսանկախ գոյությունը պահպանեց մի քիչ ավելի երկար։ 427 թվականին Արշակունիների դինաստիան վերացվեց նաև Հայաստանի արևելյան մասում, որը, ինչպես վկայում են մեր մատենագրական աղբյուրները, երկրի ընդհանուր քաղաքական շահերի տեսակետից կործանարար հետևանքներ ունեցավ։ Քաղաքական կենտրոնացած, թեկուզ կիսանկախ միապետական իշխանության կործանումը մեծապես նպաստում էր երկրի վերջնական գրավմանը, ժողովրդի ստրկացմանն ու ասիմիլյացիային։

Արշակունիների դինաստիայի կործանման մեջ փոքր դեր չկատարեցին հայ նախարարական տները, որոնք սպասում էին, թե վասալական անմիջական կախումը պարսկական արքունիքից կազատեր իրենց սեղմված վիճակից, ավելի կլայնացներ նրանց ֆեոդալական իրավունքները։ Սակայն հայ նախարարները շուտով համոզվեցին, որ վասալական կախումը պարսկական արքունիքից ոչնչով չլայնացրեց նրանց ֆեոդալական իրավունքները. ընդհակառակը, պարսկական արքունիքը ամեն կերպ ձգտում էր սահմանափակել նրանց ավատական, ֆեոդալական-ազնվական իրավունքները, ձգտում էր այլասերել, ապա և վերջ տալ հայ նախարարական դասի գոյությանը՝ իբրև ինքնուրույն քաղաքական ուժի։ Անկասկած էր, որ ստեղծված իրադրության պայմաններում նորից պետք է օրակարգի հարց դառնար հայ ինքնուրույն պետականության, թագավորական իշխանության վերականգնման հարցը։

Որքան մեզ հայտնի է, մինչև այժմ այս հարցը չի գրավել մեր պատմաբանների, այդ թվում և սովետահայ պատմաբանների ուշադրությունը։ Անկասկած է այս հարցի կարևորությունը հայ ժողովրդի հին շրջանի պատմության ուսումնասիրության համար։

Քաղաքական մի այնպիսի խոշոր իրադարձություն, որպիսին Վարդանանց պատերազմն էր, չէր կարող նորից կյանքի չկոչել ինքնուրույն քաղաքական պետականության և թագավորական իշխանությունը վերականգնելու գաղափարը։ Այդ մասին պատմական աղբյուրները որոշ տեղեկություններ են հաղորդում, որոնց վրա անհրաժեշտ է ուշադրություն դարձնել։

Որ Ավարայրի ճակատամարտի նախօրյակին դրված է եղել հայ ինքնու-

բույն թագավորական իշխանության վերականգնման հարցը, պարզ երևում է Թովմա Արծրունու մի վկայությունից. նա գրում է, որ Վարդանանց պատերազմի նախօրյակին հայ նախարարները. «...զթագաւորաբնակ տեղին մեծին Տրդատայ տան ի ձեռս Վահանայ Արծրունւոյ՝ շինել նմա տուն թագաւորաց, արարս պատրաստութեամբ. քանզի խորհեցան թագաւորեցուցանել զնա ի վերայ հայոց, զի էր այր սրտեայ և ուժեղ, քաջախորհուրդ և իմաստախոհ, խոնարհ, առատաձեռն և զուարթամիտ։ Բայց յետոյ անմիաբան գտեալք նախարարքն հայոց՝ թողին զոր խորհեցանն վասն թագավորելոյ Վահանայ ե անցին գնացին առ մեծն Վարդան. գնաց և Վահան զհետ նախարարացն առ Վարդան ասաջնագոյն, տալ նման զվերակացութիւն հայոց. և եղեն հնազանդեալ նմայ զամենայն աւուրս Վարդանայ»[1]։

Թովմա Արծրունու այս վկայությունը ցույց է տալիս, որ Ավարայրի ճակատամարտի նախօրյակին նախարարները հայ ժողովրդի քաղաքական ակտիվության և պարսկական արքունիքի դեմ ծառացած դժգոհության ու պայքարի պատրաստակամության բուռն ալիքի պայմաններում մտադրվել են վերածնել կործանված հայ թագավորական իշխանությունը, և նույնիսկ թագավորական գահի թեկնածու են առաջադրել Վահան Արծրունուն, բայց ինչ-ինչ պատճառներով, որոնց մասին պատմիչը լռում է, չեն միաբանել այս հարցում, և նախընտրել են Մամիկոնյան տան տանուտերին՝ Վարդանին, և գնացել են «առ Վարդանն առաջնագոյն» նրանց հետ գնացել է նաև ինքը՝ Վահան Արծրունին։ Վարդանի նկատմամբ, իբրև հայ նախարարական տոհմերից ամենաազդեցիկներից մեկի առաջնորդի, այսպիսի վստահությունը շատ բնական էր։

Կարծում ենք, որ Արծրունու կարծիքը կասկածի ենթարկելու ոչ մի հիմք չկա, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Թովման Արծրունյաց տան տոհմային պատմիչն է, և իբրև տոհմային պատմիչ մեր պատմիչների մեջ ամենատենդենցիոզն է թերևս, որն ամեն առիթով բարձրացնում է Արծրունիներին, արհամարհելով և ետ մղելով մյուս հայ նախարարական տների ներկայացուցիչներին։ Եթե իր ձեռքի տակ չունենար հին դարերից եկող հավաստի տեղեկություններ, դժվար թե նա հորիներ մի այնպիսի պատմություն, որի մեջ բացահայտորեն նսեմանում է Արծրունյաց տոհմի ներկայացուցիչը և առաջնությունը տրվում է Մամիկոնյանին։

Այս առթիվ հետաքրքիր հիշատակություն է պահպանվել նաև 10-րդ դարի պատմիչ Մեսրոպ Վայոցձորեցու «Պատմութիւն սրբոյն Ներսիսի հայոց հայրապետի» աշխատության հիշատակարանում[2], որը գրված է 967 թվականին։ Պատմիչը գրում է. «...Վարդան Մամիկոնեան բռնացեալ ունէր զտեղի թագաւորացն Հայոց... ասս Ի. և արիաբար ընդդիմամարտեալ քաջութեամբ ԽԲ պատերազմացն պարսկական զաւրացն, որ դիմէին ի վերայ նորա. և յաղթեալ նոցա քաջն Վարդան դարձուցանէր զնոսա և յաղթահարէր զնոսա վերին աւգնականութեամբն և զաւրութեամբ սուրբ խաչին։ Եւ յետ բազում յաղթութեան նահատակեալ

[1] Թովմա Արծրունի. Պատմութիւն տանն Արծրունեաց։ Թիֆլիս, 1917, էջ 138. ընդգծումները իմն են—Վ.Ն.։

[2] Մեսրոպ Վայոցձորեցու նշված աշխատությունը տպագրված է «Մոփերը հայկականը»-ի 2 հատորում, բայց հիշատակարանը այնտեղ թերի է և մեր մեջ բերած հատվածը չկա։ Թե ինչ պատճառով դրքի հրատարակիչները (Մխիթարյանները) պետք է դուրս թողնեին հիշատակարանի մեջ հետաքրքրող հատվածը, այդ մասին խոսք կլինի քիչ ներքևում։

առնոյր մարտիրոսական պսակն յաւուրս Յազկերտի պարսից արքայից արքայի...»[1]։

Այդ նույն պատմիչի մի ուրիշ, 1441 թվականի ձեռագրի մեջ կա նույն հիշատակարանը, որի մեջ դարձյալ Վարդանի մասին հայտնվում է նույն համառոտ տեղեկությունը, իսկ հիշատակարանի վերջում կարդում ենք. «Արդ այս համառաւտ ասացաւ. զայլս ամենայն ի Սուրբ Վարդանաց գրոցն գտցէս զբովանդակն»[2]։ Պարզ է, որ Մեսրոպը այստեղ պարզապես մատնանիշ է անում իր աղբյուրը՝ «Ս. Վարդանաց գիրքը», որն է Եղիշեի պատմությունը։ Մեսրոպ Վայոցձորեցու հիշատակության հավաստիությունը հաստատելու համար ուշագրավ է նկատի առնել նրա պատմության բնույթը։

Մեսրոպ Վայոցձորեցու «Պատմութիւնը» իրենից ներկայացնում է 5-րդ դարի պատմիչների գործերից, մասնավորապես Փավստոսից կատարած ծաղկաքաղ. նրա պատմությունը հայ հնագույն մատենագրական աղբյուրներից տարբեր տեղեկությունների կոմպիլյացիա է. ինքը, Մեսրոպը այդ առթիվ գրում է. «Մեծ ցանկութեամբ ծաղկաքաղ արարի զգիրս զայս ի Հայոց մնացորդաց յԱրևելից գրոց... Եւ արդ զայս հանեալ յԱրևելից գրոց ի Հայոց Մնացորդացն պատմութեանց»[3]։

Մեսրոպի պատմության հիշատակարանում պահպանված վկայության հավաստիությունը ևս կասկածի տակ դնելու ոչ մի հիմք չկա. դրա համար հիմք չի կարող լինել և այն, որ նրա պատմությունը գրվել է 10-րդ դարում. եթե փաստը նրան հնագույն հիշատակարաններից հայտնի չլիներ, որոնցից նա ծաղկաքաղ է անում իր ամբողջ պատմությունը, ապա ի՞նչ հիմքեր կան ենթադրելու թե Վարդանի մասին հաղորդածը չի եղել նրա աղբյուրներում և հնարել է ինքը՝ Մեսրոպը։ Այդպիսի ենթադրության համար տվյալ դեպքում ոչ մի հիմք չկա։

Եղիշեի պատմության մեջ ևս մեզ հետաքրքրող հարցի մասին մի կարևոր վկայություն է պահպանվել, որի վրա ևս, ցայսօր պատմաբանները ոչ մի ուշադրություն չեն դարձրել։ Եղիշեն պատմում է, որ երբ ապստամբ նախարարների խմբից անջատվեց Վասակը, դավաճանեց, իր հետ տանելով որոշ թվով նախարարների, Վարդանը «...Հրաման տուեալ ամենայն զօրացն ժողովել յԱրտաշատ քաղաք, փոխանակ յետս կացելոցն որ ելին զհետ իշխանին Սիւնեաց, զեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս ի տեղի նոցա մատուցանէր, և զիւրաքանչիւրն զօրս տայր նոցա, զի դեռևս ինքն ունէր զամենայն աշխարհն»[4]։

Այս տեղեկությունից պարզ է դառնում, որ Վարդանն իրեն իրավունք է վերապահել իր ուզածի ձևով տնօրինելու Վասակի հետևից գնացած նախարարների զորքն ու կալվածքները, տալով դրանք ի տնօրինություն դավաճանածների հարազատներին՝ որդիներին, եղբայրներին կամ եղբոր որդիներին, հավանաբար նրանց, որոնք միարանել են Վարդանի գլխավորած ապստամբության գործին։ Նախարարական կալվածքների և զորական ուժի նկատմամբ այսպիսի իրավունք, ինչպես հայտնի է, ունեցել են միայն հայ Արշակունի թագավորները և Արշակունիների դինաստիայի կործանումից հետո այդ իրավունքն իր ձեռքն է վերցրել պարսից թագավորը։

---

[1] ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ձեռագրատան (Մատենադարանի), ձեռագիր № 5980, արտագրված 1297 թվականին, էջ 121 ա—բ։

[2] Մատենադարանի ձեռագիր, արտագրված 1441 թվականին, № 1665, էջ 102 ա։

[3] «Սոփերք հայկականք», հատոր Զ., 1853 թ., էջ 138—139։

[4] Եղիշե, էջ 128, ընդգծումը իմն է— Վ. Ն.։

Վերոհիշյալ տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Ավարայրի ճակատամարտի նախօրյակին, երբ Վասակը իրեն բացահայտում է իբրև դավաճան, երկրի քաղաքական իշխանությունը տնօրինելու համար նախարարները որոշում են նորից վերականգնել հայ թագավորական իշխանությունը և դրա համար առաջադրում են Վարդան Մամիկոնյանին, որին տրվում է «զվերակացութիւն հայոց»— նրան հնազանդվում են նախարարները— «և եղեն հնազանդեալ նմայ զամենայն աւուրս Վարդանայ»։ Վարդանը մնում է զորահրամանատար—սպարապետ, միաժամանակ նրան է հանձնվում երկրի քաղաքական իշխանության ղեկավարությունը, Հայաստանի տանուտերությունը կամ ինչպես ասում է Եղիշեն, «ինքն ունէր զամենայն աշխարհն»։ Բնորոշ է, որ Վարդանի տնօրինությանն են անցնում նաև «զտեղի թագաւորացն հայոց»— նա տիրակալություն է անում և Արշակունիների սեփական կալվածքների վրա, նրան է տրվում «զբազաւորաբնակ տեղին մեծին Տրդատայ...» (Թովմա), Վարդանը «բոնացեալ ունէր զտեղի թագաւորացն հայոց» (Մեսրոպ Վայոցձորեցի)։

Կարծում ենք, որ այս ուշագրավ վկայություններից պետք է եզրակացնել, որ եթե նույնիսկ բոլոր օրինական ծիսակատարություններով սպարապետ Վարդան Մամիկոնյանը չի թագադրվել, համենայն դեպս ընտրվելով նախարարների կողմից, նրա ձեռքին է գտնվել երկրի քաղաքական իշխանության փաստական ղեկավարությունը։ Նա իրավունք է վերապահել իրեն իշխելու նախարարական տների, նրանց զորքի ու կալվածքների վրա. և վայելելով ապստամբությանը միացած նախարարների համակրանքը, ձգտել է վերականգնել հայ թագավորական իշխանությունը։ Շատ բնական է, որ այս՝ Վարդանի հայ թագավորական իշխանության վերականգնման գործը իբրև պրոգրեսիվ գործ ֆեոդալական մասնատվածության պայմաններում ժամանակին մեծ աջակցություն է գտել ապստամբ ժողովրդի կողմից։

Այս հարցը չափազանց կարևոր նշանակություն ունի 5-րդ դարի հայոց պատմության մի շարք հարցերը ճիշտ լուսաբանելու տեսակետից։ Այստեղից էլ, ի միջի այլոց, շատ բան է պարզվում Վասակի դավաճանական քաղաքականության դրդապատճառների մասին— նա, որ երկրի մարզպանն էր և ամենքից շատ կարող էր հավակնություն ունենալ հայոց թագավոր դառնալու, գրգռվելով նախարարների վերաբերմունքից (Վարդանին նախընտրելու), ելնում է Վարդանի ղեկավարած ապստամբության դեմ, դավաճանում հայերի մղած ազատագրական կռվին, հույս ունենալով հայոց թագ ստանալու Հազկերտի ձեռքից իր դավաճանության գնով։ Այս առթիվ արդեն առատ տեղեկություններ են պարունակում Եղիշեի և Փարպեցու պատմությունները։

Այս առթիվ սակայն, մի հարց կարող է առաջանալ։ Ինչո՞ւ Վարդան Մամիկոնյանի միջոցով հայ թագավորական իշխանությունը վերականգնելու մասին ուղղակի վկայություններ չեն պահպանվել հայ հնագույն պատմիչների երկերում։ Այդ կարելի է երկու կերպ բացատրել։ Նախ՝ ակնհայտ է, որ Եղիշեն և Փարպեցին իբրև քրիստոնեական եկեղեցու իդեոլոգներ մի ձգտում են ունեցել— Վարդանանց պատերազմը ներկայացնել իբրև քրիստոնեական հավատի համար մղվող կռիվ, իսկ Վարդանին՝ իբրև «սուրբ հավատի նահատակ», որի կրոնական փառքին, «սրբությանը» բնականաբար չեն ուզեցել որևէ աշխարհիկ մոմենտ խառնել։ Մեր հոգևոր պատմիչների այսպիսի մտայնությունը 5-րդ դարի պայմաններում միանգամայն բնական ու հասկանալի երևույթ պետք է համարել. նրանք պատմության դպքերն աշխատել են լուսաբանել քրիստոնեա-

կան եկեղեցու շահերի տեսակետից, մի բան, որ շատ դեպքում հանգեցնում է պատմական իրադարձությունների միակողմանի ու տենդենցիոզ մեկնաբանությանը։ Ուշագրավ է այն, որ այսպիսի մոտեցումը հատուկ է եղել նաև ուշ շրջանի հայ կղերական պատմագրությանը։ Մեր կարծիքով հենց այս տեսակետից պետք է բացատրել այն հանգամանքը, որ Մեսրոպ Վայոցձորեցու պատմության հրատարակիչները՝ Մխիթարյանները, 19-րդ դարում («Սոփերք հայկականքի» Զ հատորիկը լույս է տեսել 1853 թվականին) պատմության հիշատակարանից դուրս են թողել վերը բերված հատվածը, որը միայն հարևանցիորեն շոշափում է Վարդանի՝ թագավորական իշխանությունը վերականգնելու ձգտումը, ավելի ճիշտ՝ թագավորական տան կալվածքներին տիրապետություն անելու հանգամանքը։

Հնարավոր է այս հարցում և մի երկրորդ ենթադրություն — որ Վարդանի, հայոց ինքնուրույն թագավորության վերականգնման ձգտումն ու հանգամանքները եղած լինեն մեր հնագույն պատմիչների— Եղիշեի և Փարպեցու երկերում և հետագայում խմբագրման ընթացքում դուրս գցվեին մոլեռանդ վանականների, եկեղեցուն ծառայող խմբագիրների ու արտագրողների ջանքերով։

Ինչևէ, գտնում ենք, որ այս հարցը պետք է գրավի մեր պատմաբանների ուշադրությունը [1]։ Որովհետև այն չափազանց կարևոր նշանակություն ունի ոչ միայն 450—451 թթ. և այնուհետև 481—84 թթ. ազատագրական պատերազմների վերջնական նպատակները ճիշտ ըմբռնելու և մեկնաբանելու տեսակետից, այլև 5-րդ դարի հայ պատմական իրականության, մասնավորապես օտարերկրյա տիրապետության դեմ ուղղված հայ ժողովրդի հերոսական պայքարի էությունն ըմբռնելու, այդ շրջանի հայ հասարակական կյանքի պատմության կարևորագույն երևույթների իսկական էությունը բացահայտելու և մեկնաբանելու տեսակետից։

[1] Այս մասին մի կողմնակի ակնարկ ենք գտնում միայն սովետահայ պատմաբան Ս. Երեմյանի „Народно-освободительная война армян против персов в 450–451 гг." հոդվածում, ուր նա գրում է. «...Վասակ Սյունին հայտարարվեց դավաճան։ Սպարապետ Վարդան Մամիկոնյանը... Արտաշատում կազմեց նոր կառավարություն։ Հայաստանի տանուտերը, այսինքն երկրի կառավարիչը դարձավ ինքը՝ Վարդան Մամիկոնյանը, ձեռքով միաժամանակ գինվորական ուժերի կառավարիչ՝ սպարապետ», տես „Вестник древней истории", 1951, № 4, стр. 56.